

## ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՀԱՏԿԱՆՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԵՐՐԱՅԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

### ՓԱՌԱՆՉԵՄ ՄԵՅԹԻՍԱՆՅԱՆ

*Հին Կտակարանը որոշ բացառություններով<sup>1</sup> գրվել է եբրայերենով և գրվել է հրեա ժողովրդի մասին, ուստի հատուկ անունների բացարձակ մեծամասնությունը (թե՛ տեղանուն, թե՛ անձնանուն) ունեն հրեական ծագում:*

*Եբրայեցիները պատկանում են մարդկային ցեղի սեմական ճյուղին, որոնք ձևավորվել են Արաբիայում, այնուհետև այս ժողովուրդները տեղաշարժվել են դեպի Հյուսիս և արևմուտք, հաստատվել Միջագետքում՝ Տիգրիս և Եփրատ գետերի միջև: Եվ պետք է ասել, որ համաշխարհային պատմության մեջ եբրայեցիների պատմությունը առանձնահատուկ տեղ է գրավում հենց միայն նրանով, որ այս ժողովուրդը դարձավ այն ընտրյալ ժողովուրդը, ում սատարեց Աստված, դարձավ այդ ժողովրդի պաշտպանն ու ուղեկիցը և կապեց իր Ուխտը հենց այս ժողովրդի հետ:*

*Ծննդոց գրքի Ժ 13-ում եբրայեցի անունը տրվում է Աբրահամին: Ցավոք այս կարևոր անվանումը բաց է թողնված Ա-1<sup>2</sup>/տե՛ս Ա-1 գրքի տողատակ 7/ և Ա-3 գրքերում, և միայն Ա-2-ն է գրում. «Եվ փախստական մը եկաւ ու աս բաները եբրայեցի Աբրամին պատմեց»: Անշուշտ, անվանումը ծագում է Աստվածաշնչի Եբեր /Eβερ/<sup>3</sup> նահապետի անունից, որը բավական երկար է ապրել և տեսել իր վեցերորդ սերնդին. եբրայեցիները իրենց անվանել են իսրայելցի՝ Հակոբ նահապետի անունից, երբ նա վերանվանվել է Իսրայել, իսկ Հուդա անունից սկսեցին կոչվել իրեաներ:*

<sup>1</sup> Դանիելի, Եզրասի, Երեմիայի գրքերի որոշ հատվածներ գրվել են արամերենով, իսկ այդ լեզուն իր անունն ստացել է Արամ անունից, որի տակ Աստվածաշնչում ընկալվում է Սիրիան Պաղեստինին սահմանակից երկիրը:

<sup>2</sup> Աստվածաշնչի գրքերը համառոտագրվել են՝ Ա-1՝ գրաբար, Ա-2՝ արևմտահայերեն, Ա-3՝ արևելահայերեն, և մեր ուսումնասիրման համար հիմք են հանդիսացել այս երեք թարգմանություններն էլ. 1. Աստուածաշունչ մատեան Յին եւ Նոր կտակարանաց. Ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց հմմբ. եբրայական եւ յունական բնագրաց, Վիեննա, 1929, Չայաստանի աստվածաշնչական ընկերութիւն, 1997 (Սահակ-Մեսրոպյան բնագիր) գրաբար), 2. Աստուածաշունչ գիրք Յին եւ Նոր կտակարանաց. Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած, Կոստանդնուպոլիս, 1890 (արևմտահայերեն), 3. Աստուածաշունչ մատեան Յին եւ Նոր կտակարանների. Արևելահայերեն մոր թարգմանութիւն, վերահրատարակութիւն, Ս.Էջմիածին, 1999 (արևելահայերեն):

<sup>3</sup> Անունները տրվում են նաև հունարեն տարբերակներով՝ ըստ Յոթանասնից բնագրի. Η ΠΑΛΑΙΑ ΔΙΑΘΗΚΗ ΚΑΤΑ ΤΟΥΣ Ο΄ Septuaginta, Id est Vetus Testamentum graece iuxta LXX interpretes edidit Alfred Rahlf, Duo volumina in uno, Deutsche Bibelgesellschaft.

Թարգմանվելով հունարեն և ասորերեն՝ եբրայական անունները հաճախ աղավաղվել են՝ ենթարկվելով հունական կամ ասորական տառադարձման: Սա է պատճառը, որ բուն եբրայական անունը մի դեպքում հունական ձևով է բերվում, մեկ այլ դեպքում ասորական, ինչպես օրինակ Աբելը/Αβελ/։ Հարել հնագույն ձևն առաջացել է Սուրբ Գրքի ասորերեն թարգմանությունից, իսկ Աբելը՝ հունականից: Աստվածաշունչում /Սահակ-Մեսրոպյան թրգմ./ միակ գործածությունը Հարել ձևն է /Ծն. Դ 2, 4, 8, 9, 25, եբր. ԺԱ 4, ԺԲ 24/: Ըստ Աստվածաշունչի համաբարբառի՝ միայն երկու գործածություն է բերվում Աբել ձևով՝ «Հայեցաւ Աստուած յԱբէլ» / Ծն. Դ 4 / և «Յարեաւ Կայիմ ի վերայ Աբէլի» / Դ 8/: Անվան նշանակություն մասին հուշող որևէ տեղեկություն չի տալիս Աստվածաշունչը, բացի Աբելի գործի բնույթից. «Եւ յաւել ծնանել զեղբայր նորա զՀարէլ. եւ եղև Հարէլ հովիտ խաշանց...» / Ծն. Դ 2/: Ըստ ԲՅԱ-ի՝ Ա սկզբնատառով այս անվան նշանակություններն են՝ սուգ, կոծ, կա՛մ դաշտ, կա՛մ հովիտ, իսկ Հ սկզբնատառով թարգմանվում է ունայնություն կամ շնչառություն, ասորերեն՝ գոլորշի /ԲՅԱ, էջ 31/: Նույն ձևով Библейский словарь-ում Աբել անունը ներկայացվում է երկու ձևով՝ Авель-друг, Хавель-дуновение<sup>2</sup>: Հր. Աճառյանը, հիմնվելով հների տեսակետին, տալիս է սուգ իմաստը, նաև բերում է հոտի առաջնորդ իմաստը /ՀԱԲ, ՀԱ, 17/: Հավանաբար վերջին տեսակետին է հարում Ռ. Բեքհատսը, որը Աբել անունը բացատրում է որպես հովիտ /ԱԱ, 61/:

Հր. Աճառյանը եբրայական հատուկ անունների մասին խոսելիս դրանք բաժանում է երկու խմբի՝

ա) անուններ, որոնք թեև աստվածաշնչային են, սակայն հայերի մեջ հետագա տարածում ու գործածություն չեն գտել, ինչպես՝ Ասեման, Ամուել, Թամնա, Յամին, Յարիր, Բասան, Սադեմ, Ջարուր և այլն:

բ) Անուններ, որոնք աստվածաշնչային են և որպես այդպիսիք՝ մեծ տարածում են գտել ինչպես քրիստոնյա մյուս ժողովուրդների, այնպես էլ հայերի մեջ. այդ անունները, ըստ Աճառյանի, 98-ն են՝ Արդիու, Աբել, Աբելգ-

<sup>1</sup> Բառարան յատուկ անուանց Աստուածաշունչ գրոց Յին եւ Նոր կտակարանաց /ԲՅԱ. Բառգիրք հայկազեան լեզուի, Մխիթար Աբբա, 72, Վենետիկ, 1769 /ԲՅԼ/:

<sup>2</sup> Անունների ռուսերեն տարբերակների և դրանց իմաստների բացատրման համար հիմք ենք ընդունել մի քանի գրքեր. 1. Библейский словарь, Нюстрем Эрик, перевод со шведского, под редакцией И. С. Свенсона, Санкт-Петербург, 1995, 2. Библейско-биографический словарь..., сост. Ф. И. Яцкевич, П. Я. Благовещенский, Москва, 2000, 3. Энциклопедия Библейская (2-е издание), Москва, 2004, 4. Симфония к синодальному изданию Библии, Свет на Востоке, Корнсталь, Институт перевода Библии, Стокгольм, 1995.

նագով, Արխտղոմ, Արրահամ, Աղամ, Աղրամելեր, Ազարիա, Ահարոն, Ահերմոն, Ամբակում, Անանիա, Աննա, Ասաներ, Ասքանազ, Բաղդասար, Բանարգես, Բառնարաս, Բարաղամ, Բարդուղիմեոս, Բեթղեհեմ, Բենիամին, Գաբրիել, Գաղ, Գասպար, Գեղեոն, Դանիել, Դավիթ, Եզեկիել, Եզր, Եղիա, Եղիազար, Եղիսե, Եղիսաբեր, Ենովք, Ենովս, Եսայի, Եսթեր, Երեմիա, Եվա, Եփրեմ, Զարարիա, Զորարաբել, Էմմանուել, Թամար, Թորգոմ, Իսմայել, Իսրայել, Լիա, Հեղի, Մաթուսաղա, Մաղաքիա, Մամբրե, Մանասե, Մանուել, Մարիամ, Մելքի, Մելքիսեդեկ, Միսայել, Միրայել, Միրիա, Մովսես, Յաբեր, Յակոբ, Յեսու, Յոր, Յովաբ, Յովակիմ, Յովասափ, Յովել, Յովիաննես, Յովնաթան, Յովնան, Յովսեփ, Յորդանան, Նազարեթ, Նաթան, Նաթանայել, Նոյ, Շամուել, Ռափայել, Ռեբեկա, Ռուբեն, Սաղովկ, Սահակ, Սաղաթիել, Սամուել, Սառա, Սամիսոն, Սեթ, Սիմեոն, Սիոն, Սիրաբ, Սողոմե, Սոփոնիա, Փանուել<sup>1</sup>:

Հին Կտակարանի բազմաթիվ անուններ դրվել են ոչ պատահականորեն, այդ իմաստները մեծ մասամբ համապատասխանում են Սուրբ Գրքում տվյալ անձի դերակատարությունը, այսինքն՝ այդ հին անունների բառային իմաստը լիովին հիմնավորվում է Աստվածաշնչում նկարագրվող դեպքերով: Այլ հարց է, որ հազարամյակների հեռվից, բազմաթիվ արտագրություններում այդ անունների գրությունը, նրանց իմաստները աղավաղվել են: Ահա թե ինչով պետք է բացատրել ԲՅԱ-ում ներկայացված անունների այդքան շատ իմաստները, երբեմն նույնիսկ հակասական: Եհովա անունն է առկա Յովարիբ Աբրի / անվան կազմում / Ա Մնաց. ԻԴ 7/, եթե հիմնվում ենք օտար աղբյուրների մեկնություններին. НЖБ-ն և ЭБ-ն տալիս են Иеговаарив /այսինքն՝ այս տեքստերի միջև կա համապատասխանություն/ և անվան նշանակությունը բացատրում ԿОТОРОГО ЗАПИСАЕТ Иегова /263/: Յովարիբ տարբերակը տրվում է ըստ Ա-2 արևմտահայերեն թարգմանություն, մինչդեռ Ա-1 և Ա-3 գրքերում անունը տրվում է Յարիբ ձևով: Ինչպես տեսնում ենք, այս տարբերակը նույնանում է հունարեն բնագրի հետ: Հետաքրքիր է ներկայացնել ԲՅԱ-ի կարծիքը: Յարիբ գլխաբառը նախ բացատրվում է իբրև «ընդդիմամարտ կամ կշտամբող կամ բազմապատկող», ապա տրվում են համանուն անձերը, որոնց մեջ առաջինը Մանդրոց ԽԶ 10-ում հանդես եկած անձն է, որ կոչվում է նաև Ահովդ /Ա-3-ում Ահող /Աճժ/, Ա-2-ում՝ Ոհող/: Անվան նշանակությունն է գովող կամ խոստովանող /ԲՅԱ, 13/: Ահա այս Ահովդը Մնացորդաց գրքում /Ա Մնաց. Դ 24

<sup>1</sup> Մեր անվանացանկում բերվում են բազմաթիվ անուններ, որոնք ներկայացված չեն Հրայյա Աճառյանի բառարանում. դա հիմնականում բացատրվում է այն հանգամանքով, որ այդ անունները չեն կրել հայերը, բայց այս սկզբունքը բառարանում երբեմն խախտվում է. ներկայացվում են անուններ, որոնք կրող անձ չի ներկայացվում, և կամ բացակայում են անուններ, որոնք անպայմանորեն գործածվել են:

Վրաստանում է Յարիր<sup>1</sup> /Հակոբի թոռան՝ Շմավոնի որդու անուն է/: Նույն աղբյուրը մեզ տեղեկացնում է, որ այս Յարիր-ը Ա Մնաց. ԻԴ 7-ում ըստ ումանց գրվում է Յովարիր /Ահարոնի սերնդից/: Հայերեն գրքերից միայն Ա-2-ում գործածված էր Յովարիր, իսկ Ա-1 և Ա-2-ում՝ Յարիր: ԲՅԱ-ն այսօր քանով չի բավարարվում և այս նույն անձի համար բերում է նաև անվան Յովարիմ տարբերակը /Ա Մակ. Բ 1/: Այսօր մանրակրկիտ ներկայացումից հետո ԲՅԱ-ն զարմանալիորեն տալիս է նաև Յովարիր գլխաբառը «տիրոջ պատերազմ կամ կոիվ կամ բազմացում» /166/ բացատրությունը: Այս անվամբ ևս տարբեր անձեր են ներկայացվում՝ տարբեր գրքերում գործող՝ Գ Եզրասի /ԺԱ 5/, Բ Եզրասի /Ը 16/..., այդ թվում նաև Ա Մնաց. ԻԴ 7-ում:

Քանի որ խոսք գնաց Եհովա անունը իբրև բաղադրիչ հանդես գալու մասին, ասենք, որ եբրայական բազմաթիվ անուններում -իա վերջնաբաղադրիչը նշանակում է եհովա, ինչպես Ամասիա /Եհովան հզորացնում է/, Երեմիա /Եհովան բարձրացնում է/, Եղիա /Եհովան իմ Աստվածն է/, Եղիար /Աստված հայր է/, Անանիա /Տիրոջ տունն է կամ տիրոջ գուշակություն/, Աբիա /Եհովան եղբայր է/, Զարարիա /Եհովան հիշում է/, Յեղիգիա /Տիրոջ սիրելի/:

Ասենք, որ Եհովա-ն ոչ միայն վերջնաբաղադրիչ է հանդես գալիս:

Ա-2-ում Բ Մնաց. ԺԷ 15-ում առկա է Յոհանան ԱՊԱՆԱՆ /անունը, որը Ա-1 և Ա-3 գրքերում համապատասխան անձին ներկայացնում է Յովանան տարբերակով: Արդյոք զբանք նու՞յն անուններն են: Օտար աղբյուրները Յոհանան անունը ներկայացնում են Иегоханан և Иоханан տարբերակներով և անվան իմաստը տալիս ար Иеговы /ՅԵ, 263/: ԲՅԱ-ն տալիս է Յոհանան գլխաբառը և այն բացատրում Տիրոջ շնորհ կամ պարգև կամ ողորմություն /170/: Բայց ամբողջ հարցն այն է, որ այս դեպքում ԲՅԱ-ն նկատի ունի բոլորովին այլ անձի, որ հանդես է գալիս Ա և Բ Եզրասի գրքերում նկատի ունենալով Բաբելի որդիներին, և անվան այդ ձևը հղում է Յովիաննես անվանը: Ի դեպ, նույն իմաստն ունեն ոչ միայն այս, այլև Յովիաննես, նաև Յովանան, Յոնան, Յոհանան անունները:

Սակայն միշտ չէ, որ -իա-ն Եհովա է ընկալվում, և որոշ անուններ բնավ այդպես չեն ստուգաբանվում, այսպես՝ Սաղարիա /հրեշտակ իմ/:

Բազմաթիվ այլ անուններում -ե/ե/լ վերջնաբաղադրիչ արմատը նշանակում է Աստված. ինչպես՝ Աբիմեել /հայր Աստծու առաքյալ/, Աբդեել

<sup>1</sup> Այսպիսի անվանափոխություններ Աստվածաշնչում, հատկապես Չին Կտակարանում, հաճախ են հանդիպում, և, ցավոք, որևէ բացատրություն այդ առումով չի տրվում:

/Աստծու ծառա, Ասիել /արար աստուած/, Բարաքիել /Աստծուց օրհնված/, Բեսելիել /Աստծու հովանու տակ/ Եգելիել /Աստված զորեղացնում է/, Եգրիել /Աստծու օգնություն կամ Աստծու գավիթ/, Ռագուել /Աստծու հովիվ, բարեկամ կամ Աստծու բեկում/, Իթիել /Աստված է/, Նարդուել /բան կամ մարգարեություն Աստծու/, Բարուել /Աստծու մեջ բնակվող/, Դանիել /Աստված է իմ դատավորը/, Հովել /Տերն Աստված է/, Ջարդիել /Աստված պարգևող է/, Իսմայել /Աստված կլսե/, Կամուել /հարյավ Աստված/, Յարնել /Աստծու շինված/, Մադադայել /գովող Աստծուն կամ լուսավորություն Աստծու/, Մայիել /պատմող Աստծու կամ ջնջող Աստված/:

Սակայն դա ևս պարտադիր կանոն չէ. բազմաթիվ անուններում -էլը բոլորովին էլ աստված չի ստուգաբանվում, այսպես՝ Աբել/սուղ/, Աբիտոփել/հիմար եղբայր/, Եգել/բաժանում/, Եգել/գնացք կամ ցողումն/, Թորել/հող/:

ԲՅԱ-ն Թորելի /Θωβελ/ համար բերում է բազմաթիվ նշանակություններ՝ տիեզերք կամ աշխարհային, ամոթ, խայտառակություն և այլն: Թորելը որպես հող է բացատրում Վ. Սահակյանի համաբարբառը, այդ անունը Թորել տարբերակով՝ իբրև գլխաբառ, տրվում է ԲՅԱ-ում՝ բառիմաստը հղելով Թորելին /Ծն. Դ 22/²: Հենց սկզբից ասենք, որ Հին Կտակարանում սրանք ներկայացվում են իբրև տարբեր անուններ՝ տարբեր անձեր անվանող. Թորելը արական անձնանուն է՝ Հաբեթի որդին./Фувал, Тува-ль/ ըստ Ծն. Ժ 2-ի, իսկ Թովրելը՝ դարձյալ արական անձնանուն է՝ Լամբքի և Սելլայի որդին /Фовел/ ըստ Ծն. Դ 22-ի: Իսկ եբրայերենում մեկ տառն անգամ փոխում է անվան իմաստը. եբրայերենում հոլովի փոփոխությունը կարող է փոխել բառի իմաստը կամ տվյալ հոլովածևը միևնույն անվան մի նշանակություն ունի, մեկ այլ հոլովածևը՝ այլ, կամ ածանցի արժեք ունեցող թեկուզ մեկ տառի հավելումը տալիս է նոր իմաստ, ինչպես՝ Ամովնորդի ազգի, Ամովս - հաստություն կամ ժողովուրդ իմ, կամ ալգնություն, Ասրիէս - քահանա, Ասրիս - քահանայք, Սեդեկ - արդարություն, Սեդեկիս - արդարություն տեսան:

Ըստ էր. Նյուստրեմի ըհ-ի՝ Թորել /Фувал, Туваль/ անվան նշանակությունը մեկնաբանվում է հետևյալ կերպ. «По общему мнению, название Фувал обозначает упоминавшийся древними народ тибаренский, населявший южное побережье Черного моря и в клинописях называвшийся Табал»:

<sup>1</sup> Այս դեպքում Յարնելը տեղանուն է՝ Նեփթադիմի ցեղին պատկանող քաղաք:

<sup>2</sup> Ինչպես տեսնում ենք, ԲՅԱ-ում այս անվան մասին հստակություն չկա, որովհետև հղվում է Թորելին, բայց նկատի ունի Թովրելին:

Բայց էր. նյութերումը չի անդրադառնում ՓՈՎԵԼ տարբերակին, նրա բառաբանում նույնիսկ չկա անվան այս տարբերակը՝ Թովբել, որից էլ կարելի է բխեցնել, որ օտար աղբյուրներում այս երկու անունները՝ Թոբել և Թովբել, նույնն են: Բայց արդյոք այդպե՞ս է, կամ այդպե՞ս ընդունենք: Անվան ՓՈՎԵԼ տարբերակը տալիս է НЖБ-ն, և այս անունը իբրև գլխաբառ գտնում ենք Энциклопедия Библейская գրքում /էջ 678/, որն էլ փաստում է դարձյալ այս երկու անունների տարբերությունը թե՛ ըստ անվան բառացի նշանակության, թե՛ ըստ անձերի:

Նույն ձևով ունենք եզել /Ալէղլ/ Ծն. Ժ 28-ում և Ա Մնաց. Ա 21-ում, որը արական անձնանուն է՝ ըստ ԲՅԱ-ի գնացք կամ ցողումն իմաստով, և Ա Թագ. Ի 19-ում՝ եզել՝ ըստ ՎՍՀԱՄ-ի բաժանում իմաստով<sup>1</sup>:

Կարելի է առանձնացնել անունների մի ողջ շարք, որտեղ Աստված, Տեր, Եհովա անուններն արտահայտող վերը բերված բաղադրիչները չկան, բայց անվան մեկնաբանության մեջ դարձյալ առկա է Աստվածը, ինչպես՝ Հեսու - Աստված է մեծանձն, Աբիուդ - նա է Հայրը /Աստծու մասին/, Աբեսաղոմ - Հայրն է խաղաղությունը /Տիրոջ մասին/, Ջերեդեոս - ըստ Հր. Աճառյանի՝ Եհովայի տուրք կամ Աստծու նվեր, պարգև, Հովսեփ - ըստ Հր. Աճառյանի՝ «յորում Աստուած բնակի, աստուածաբնակ», Հոսիաս-Աստված գորավիզ է:

Ձուգաձև անունների մի շարք կարելի է առանձնացնել ս վերջնահնչյունով և առանց դրա, ինչպես՝ Ազարիա - Ազարիաս, Ակուդիա - Ակուդիաս, Ասարիա-Ասարիաս, Հովսիա - Հովսիաս, Ոզիա - Ոզիաս, Ուրիա - Ուրիաս և այլն, որտեղ ս-ի առկայությունը անվան իմաստը չի փոխում, թեև գիտենք, որ եբրայերենում հաճախ մեկ տառն անգամ փոխում է բառի իմաստը:

Անունների մի խումբ էլ կարելի է առանձնացնել, որոնք ներկայանում են մեկ տառի այնպիսի փոփոխությամբ, որ հաճախ դժվար է ասել, թե այդ փոփոխությունը ինչի հետևանք է՝ արտագրող գրիչների՝ տվյալ տառի շփոթման, թե՞ փոխազդեցական հնչյունափոխության տարբեր դրսևորումների, ինչպես՝ Աքա - Աքաս, Աքափ - Աքափ, Բադա - Բադակ Նաբադ - Նադաբ, Նափովթ - Նափթով, Սոմնացիդ - Սոմնացիդ, Քեդեզ - Քեդեկ Քետուր - Քետտուրա, Քասպի - Քազպի և այլն:

Աստվածաչնչյան անունների քննությունը նպատակահարմար է տանել այդ անունների, դրանց արտահայտած իմաստների լեզվական և այդ անունները կրող անձերի մասին պատմական ու հանրագիտարանային համատեքստում: Քննարկման նյութ են դառնում հատկապես եբրայական

<sup>1</sup> Համաբարբառ Աստվածաշունչ մատյանի, Վ. Գ. Սահակյան, Բեյրութ, 1963:

ծագում ունեցող այն անունները, որոնք կրող անձերը որոշակի ղերակատարում ունեն Աստվածաշնչում:

### ՆԱՀԱՊԵՏՆԵՐ

Ծննդոցի 12-50-րդ գլուխներում նկարագրվում է հրեա նահապետների կյանքը: Աստվածաշունչը ուղղակի նշում է այն կապը, որ ձգվում է Աբրահամից մինչ Հիսուս. «Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի որդույ Դավթի որդույ Աբրահամու...» /Մատթ. Ա 1/: Եվ քանի որ Ադամն է մարդկության նախահայրը, նահապետների անվանացանկը սկսվում է հենց Ադամով:

ԱԳԱՄ/Αδამ/-ը համայն մարդկության ընդհանուր անվանումն է և հատուկ անունը մարդկության նախահոր:

Ըստ Աստվածաշնչի / Ծն. Բ 16, 19-23, Գ 8, 12, Դ , Ե, Բ Օրին. ԼԲ 8, Ա Մնաց. Ը 8, Տովբ. Ը 8, Ղուկ. Գ 58 ևն / առաջին մարդը, որին ստեղծեց Աստված. «Եւ ստեղծ Տէր Աստուած զմարդն հող յերկրէ/. եւ փչեաց յէրեսս անոռա շունչ կենդանի, եւ եղեւ մարդն հողի կենդանի» /Ծն. Բ 7/χουν απο της γης/:

Եբրայական այս անունը ունի բազում նշանակություններ՝ հողեղեն, մարդ, երկրային, նաև շիկակարմիր կամ արյունային /ԲՅԱ, 6/, ըստ Հր.Ա-ճառյանի՝ մարդ, մարդ էակը, երկիր, հող /ՀԱԲ, 148/: Վերջին երկու իմաստի կապակցությունը Հր. Աճառյանը հավելում է, որ «հները կարծում էին, թե բուն նշանակությունն է հող. «Ադամն կաւ ասի եւ Եւայն օձ» /Յայսմ. մրտ. 14/, «Ադամ նշանակէ/ երկիր» /Տաթև. Հարց. 299 /: Ըստ ՅԵ-ի<sup>1</sup> տրվում է անվան красная земля նշանակությունը. ասենք, որ Աստվածաշնչում ևս երկու քաղաք անվանվում են Ադամա, որոնք արդեն ունեն հող - земля նշանակությունը /21/:

Մարդկային ազգի նախահայրը և առաջին ծնողը, որը եղավ Աստծու վերջին արարչագործությունը: Բացի Աբելից, Կայենից և Սեթից, Ադամն ու Եվան ունենում են ևս 33 որդի և 27 դուստր, որոնք Ծննդոցում անվանված չեն:

Ադամ անունը հետագայում փոխանվանաբար կղբվի Քրիստոսի վրա. Պողոս առաքյալը նրան կանվանի երկրորդ Ադամ . «Առաջին մարդն՝ Ադամը կենդանի չունչ եղաւ, երկրորդ Ադամը՝ կենդանարար հոգի» /Թուղթ առ Կորնթ. ԺԵ 45/: Սա, իհարկե, քաջ հայտնի է մեր բանաստեղծներին, ո-

<sup>1</sup> Энциклопедия Библейская (2-е издание), Москва, 2004.

րոնք իրենց տաղերում ու գանձերում փոխաբերաբար Քրիստոսին անվանում են Ադամ. «Մայր Աստուծոյ Մարիամ Դուստր Դաւթեան թագազարմ Ծնար մարմնով զնորն Ադամ, Որ նորոգեաց զիկնն Ադամ», «Այսաւր երկրորդ Ադամ պահեալ Պարտեաց զյաղթող Հնոյն Ադամայ...» /60/, «Ի յամլորդուոյ ընկեալ, Եւա, զաւետիս՝ Նոր Ադամ ծընաւ քո դուստրն՝ կոյսըն Մարիամ» /233/, «Այսաւրն ցընծայ Ադամըն Հին՝ նոր Ադամաւ նորոգելով» /Ն.Շնորհալի, ՏԳ 55/:

Ընդհանրապես պետք է նկատի ունենալ, որ Հայ Հին և միջնադարյան բանաստեղծութեան մեջ Հաճախ ներկայացվում են մի կողմից՝ Ադամ-Քրիստոս, մյուս կողմից՝ Եվա-Մարիամ զույգ հակադրությունները՝ որպես ներհակ դրսևորումներ. Ադամը և Եվան մարդկության վրա անեծք դրին, Մարիամն ու Քրիստոսն ազատեցին մեղքից: Ադամի գերեզմանը գտնվում է Գողգոթայի վրա, և առաքելական բացատրությամբ երկրորդ Ադամը՝ Քրիստոսը, խաչվեց Հենց Ադամի գերեզմանի վրա: Ն. Շնորհալու «Մեկնութիւն Մատթէի» երկում կարգում ենք, որ Գողգոթան «...էր շիրիմ առաջին մարդոյն, յառաջնոցն ասացեալ, որպէսզի զԱդամ կառափնատ առողջացուցէ, զի որպէս ծննդեամբն զանէծս Եւայի եբարձ ի Բեթլեհեմ քաղաքի նոյնպէս և զԱդամայն ի Գողգոթա տեղի...»<sup>1</sup>:

Ըստ Աստվածաշնչի՝ Ադամն առաջին մեղավորն է երկրի վրա, մեղքը աշխարհ մտցնողը և այն իր սերնդի վրա տարածողը. «Եւ ցԱդամ ասէ, Փոխանակ զի լուար ձայնի կնոջդ քո, եւ կերար ի ծառոյ, անտի յորմէ պատուիրեցի քեզ անտի միայն չուտել, եւ կերար ի նմանէ, անիծեալ լիցի երկիր ի գործս քո. տրտմութեամբ կերիցես զնա զամենայն աւուրս կենաց քոց...Քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո, մինչեւ դարձցիս յերկիր ուստի առար. զի հող էիր եւ ի հող դարձցիս» /Ծն. Գ 17-19/: Այդ մեղքի պատճառով նա վտարվեց Եդեմից՝ դառը քրտինքով ապրելու Աստուծու պատգամին արժանանալով, տեսավ Հարազատ որդու՝ Աբելի կորուստը Հարազատ եղբոր՝ Կայենի ձեռքով: Ադամի ժառանգներից Հիշվում է միայն մեկի՝ Սեթի անունը: Ադամն ապրեց ինը հարյուր երեսուն տարի, տեսավ իր սերնդի բազմանալը երկրի վրա: Ըստ պարականոն ավանդությունների՝ Նոյ նահապետը իր տապանը կառուցելիս հանեց Ադամի ոսկորները և իր հետ վերցրեց: Իսկ ջրհեղեղից հետո իր գավազներին բաժանեց Ադամի սրբազան նշխարները: Ադամի գանգը բաժին հասավ Սեմին:

ԱՐՐԱՀԱՄ, ԱՐՐԱՄ, ԱՐՐԱՄ /Αβρααμ, Αβρααμ/- Ըստ Աստվածաշնչի՝ Աբրամ, Աբրամ կամ Աբրահամ անվան բուն նշանակությունն է՝ ազգերի

<sup>1</sup> Ներսես Շնորհալի, «Մեկնութիւն Մատթէի», էջ 593:



հայր կամ բազմության հայր<sup>1</sup> /ԲՅԱ, 5/։ Հյուբըմանը այս անունը համարում է ասորական փոխառություն։ Անվան նախնական ձևը եղել է Աբրամ /Ծն. Ժէ 5/ հայր բարձր (այդպես է կոչվել ի պատիվ Միջագետքի բազմաթիվ աստվածներից մեկի), որը Աստծու կողմից վերանվանվեց Աբրահամ. «Ահա իմ ուխտը քեզ հետ է, եւ ազգերի բազմութեան հայր կլինիս. եւ այսուհետեւ քո անունը Աբրամ չաստի, այլ քո անունն Աբրահամ լինի. որովհետեւ քեզ ազգերի բազմութեան հայր արի» /Ծն. Ժէ 4, 5/։ Ահա թե ինչու առանձնացվում է երկու գլխաբառ՝ Աբրահամ և Աբրամ. վերջին անվանման համար տրվում է «հայր բարձրացեալ կամ վերաձրարձ» նշանակությունները /ԲՅԱ, 5/։ Հր. Աճառյանը նշում է, որ հին հայերեն եղել է նաև Աբրաամ, որը հունական ձևի ուղիղ տառադարձությունն է և համարվել է գիտական ձև, բայց այժմ չի գործածվում /ՀԱԲ, ՀԱ/։ Անվան հ-ն մեկնաբանվում է իբրև հողակապ<sup>2</sup>, և բերվում են նույն ձևով նաև Գեհեն, Ահարոն, Բահադ, Իսահակ, Հովհաննես անունները։ Գրություն տեսակետից կա համապատասխանություն հայերենի և սեմականի միջև. հունարենում Աբրահամ և Իսահակ անունները ունեն կրկնակ աա, բայց հայ թարգմանիչները դրանց միջև դրել են հ։ Հր. Աճառյանը գրում է. «Օտար բառեր փոխ առնելու ժամանակ հնագոյն հայերէնը կամ այդ դէպքում երկու աի միջեւ ներմուծել է հ, եւ կամ աւելի գիտական ձեւ տալու համար բառին, պահել է երկու ա, իբրեւ բացատիկ ձեւ։ Այսպէս՝ Աբրահամ անունը գրուած ունենք Աստուածաշնչում թէ՛ Աբրահամ եւ թէ՛ Աբրաամ»։

Աբրահամը Սուրբ Գրքի ամենանշանավոր անձերից մեկն է, հրեա ազգի նահապետը՝ Սեմի սերնդից՝ Թարայի որդին։ Ըստ Ծննդոց-ի հինգերորդ գլխի՝ Աբրահամին Աղամից բաժանում է 1566 տարի, ջրհեղեղից մինչև Աբրահամ՝ 427 տարի, ըստ այդմ՝ Աղամին Աբրահամից բաժանում է մոտ 2000 տարի /Ծն. Ե, ԺԱ/, Քրիստոսից մեծ է 2040 տարով<sup>3</sup>։ Ծննդոց-ի 12-25-րդ գլուխներում ներկայացվում են Աբրահամի կյանքը, գործունեությունը։ Նա ապրում է Ուր (Քաղդես) քաղաքում, որը այն ժամանակներում թեև զիջում էր Բաբելոնին, բայց կարևոր նշանակության քաղաք էր, և որը հետագայում Եփրատի ջրերով է ողողվում, իսկ ավելի ուշ ծածկվում հաստ ավազի շերտով։ Աբրահամի անունը կապվում է նաև Խառան քաղաքի հետ, ուր ապրել է նա իր եղբոր՝ Նաբովրի հետ։ 75 տարեկան Աբրահամը Աստծու

<sup>1</sup> Անվան մեկնաբանության մասին տարակարծություններ չկան։

<sup>2</sup> Հյուբըման Յ., Հայերենի քերականություն, Եր., 2003, 290-291։

<sup>3</sup> Ըստ Библейско-биографический словарь-ի տվյալների՝ Աբրահամին Հիսուսից բաժանում է 2180 տարի /35/։

պատվիրանով հաստատվում է Քանանում: 80-ամյա Աբրահամը փրկում է Ղովտին և հանդիպում է Սեթիսեղեկին: 99 տարեկանում ունենում է Իսահակ որդուն: 160 տարեկանում ունենում է հակոր թոռանը՝ Իսրայելին:

ԱՍՔԱՆԱԶ, ԱՍՔԱՆԱՍ /Аскеназ/Асханаз/ անվան նշանակությունն է «հոտ իբր ցողազին կամ սրսկեալ» /ԲՅԱ, 31/:

Ըստ Սուրբ Գրքի՝ Գամերի որդին, Թորգոմի եղբայրը և Հաբեթի թոռնը/Ծն. Ժ 3. «Եւ Գամերի որդիքը՝ Ասրանաս, Րիփաթ եւ Թորգոմա» Ա Մնաց. Ա 3/, ըստ որի էլ հայ ազգը այդպես էլ մեկ անվանվում է՝ Ասրանագյան, մեկ՝ Թորգոմյան, մեկ՝ Հաբեթյան: Մեր թարգմանիչները հայերին այսպես կոչել են՝ նկատի ունենալով Աստվածաշնչի հետևյալ տողերը՝ «Նորա դեմ պատրաստեցէ՛ք ազգերին, հրաւիրեցէ՛ք նորա դեմ Արարատի, Միննիի եւ Ասրանասի թագաւորութիւնները...» /Երեմ. ԾԱ 27 (Այստեղ արգեն Ասրանասը՝ որպես երկրի անվանում-ՓՄ): Ուսումնասիրողները գտնում են, որ «Ասրանագյան» կամ «Ասրենագյան» անվանումը վերաբերում է սեպագիր արձանագրություններում հիշատակվող «Աղջյուազային», որով կոչում էին սկյութներին, երբ նրանք, թափանցելով Անդրկովկաս և Հայաստան, հաստատել էին իրենց իշխանությունը: Ըստ Ս.Վեբերի՝ «Ասրանագայ՝ հարաւային հայոց մեկ մասը կազմելուն ենթադրութիւնը կապարցուցանէ Ազրեն հայկական յատուկ անուան գոյութեամբն ու հայացի ազմասնիկով»<sup>1</sup>:

ԵԲԵՐ /Евер, Еβερ/ անունը հուշում է, որ այս անունն է ընկած եբրայեցի բառի հիմքում. նշանակում է «անցաւոր կամ անցք, կամ բարկություն, կամ յղի և կամ ասորերէն՝ ցորեն» /ԲՅԱ, 75/, ըստ ՅԵ-ի՝ նշանակում է пришелец, странник /186/ :

Ըստ Աստվածաշնչի /Ծն. Ժ 21, 24, 25, ԺԱ 14-15, Ա Մնաց. Ա 18, Նեեմ. Է 63, Ղուկ. Գ 35/ Սաղայի որդու անունը՝ եբրայեցիների նահապետը: «Եւ Սեմայ ծնան որդիք եւ նորա, հօրն ամենայն որդւոցն Եբերայ, եղբօրն Յաբեթի երիցու: Եւ Արբաքսադ ծնաւ զՍաղա, եւ Սաղա ծնաւ զԵբեր. եւ Եբերայ ծնան երկու որդիք. անուն միոյն Փաղէկ /բաժանում/, զի յաւուրս նորա բաժանեցաւ երկիր. եւ անուն եղբօր նորա Յեկտան...» /Ծն. Ժ 21/: Եբերը տեսավ իր սերնդի վեցերորդ ծնունդը, որոնցից մեկն էլ Աբրահամն էր և երկարակյաց լինելով՝ ապրեց Աբրահամից ավելի երկար/464 տարի /Ղուկ. Գ 35/: Սրա անունով էլ հրեաների նախնիները կոչվեցին եբ-

<sup>1</sup> Տե՛ս Ս. Վեբեր, Արարատը Սուրբ Գրքի մեջ, էջ 21:

րայեցիներ<sup>1</sup>: Ըստ ԲՅԱ-ի՝ եբրայեցիների ծագման մասին կան տարբեր կարծիքներ, այն, որ սրանց նախահայրը նաև Իէլն էր համարվում և հավելում, որ առավել ճիշտ կլիներ անունը վերցնել Սեմից: Բայց եբրայեցի անունը առաջացավ նրանից, որ երբ նշանակում է անցավոր. «...զի երբ թարգմանի անցաւոր. և զի Աբրահամ յելեալ յաշխարհէ. և յազգէ իւրմէ էանց յերկիր օտար յայնկոյս գետոյն Եփրատայ, այն յերկիրն քանանացոց, վասն այսորիկ յայնմ հետէ որդիք նորա կոչեցան եբրայեցիք, այն է՝ անցաւորք» /75/: Բառացիորեն նույնը կրկնում է ՅԵ-ն. «Слово еврей происходит или от патр. **Евера**, сына Салы...или от евр. глагола **eber** (переходить через), что значит пришелец чужой земли. Народ, известный под именем евреев, пришел в Ханаанскую землю через Евфрат...т.е. **пришельцами из другой страны**» /187/:

Աստվածաշնչում ևս չորս անձ անվանվում են Եբեր:

**ԵՆՈՔ, ԵՆՈՎՔ, ԵՆՕՔ, ԵՆՈՎՍ** /ЕНОХ//ЭНОХ, ЕНОС//ЭНОС, Еνωχ, Еνωс/- Ըստ Աստվածաշնչի /Ծն. Ե 6, 9, 10, 18, 19, 21, 23, 24/- Ենովս, Ենովք, Ենօք: Ըստ որոշ աղբյուրների՝ անունը նշանակում է խրատյալ /ԲՅԱ, 87/, նաև՝ ուսուցիչ /ԱԱ, 6/, ըստ Հր. Աճառյանի՝ ծագում է օրհնել, նվիրագործել բայից և նշանակում է նվիրյալ /ՀԱԲ, Հ Բ, 121/, ըստ ՅԵ-ի՝ ЕНОС-муж, человек, ЕНОХ-посвященный /212/: Հր. Աճառյանը ևս առանձնացնում է Ենովս և Ենովք անունները՝ Ենովս- ին տալով մարդ նշանակութունը, իսկ Ենովք-ին՝ նվիրյալ /ՀԱԲ, Հ. 2, 120-121/:

Անվան տարբերակները առաջացել են հունարեն թարգմանությունից, որտեղ անվան ուղիղ ձևն է Ենօք-Еνωχ, իսկ հունարենում սեռական հոլովում անունը դառնում է Еνωс-Ենօ/վ/ս :

Աստվածաշնչից հայտնի են այս անունը կրող երեք անձ.

1. Ենովք/ЕНОХ/ Կայենի որդի Ենովքը /Ծն. Դ 17-18/, որի պատվին Սուրբ Գրքում հիշված առաջին քաղաքը կոչվեց Ենովք: «Եմուտ Կային առ կին իւր, եւ յղացաւ եւ ծնաւ զԵնովք. եւ շինէր քաղաք, եւ դնէր անուն քաղաքին յանուն որդւոյ իւրոյ Ենովքայ»<sup>2</sup>:

2. Ենովս /ЕНОС/ Սեթի որդին՝ Ենովսը, որն ապրել է 905 տարի, ունեցել է Կայնանին, սա՝ Սաղադիեյին, վերջինս Հարեդին, Հարեդն էլ այն Ենովքին, որը Մաթուսաղայի հայրը եղավ:

<sup>1</sup> Եբրայեցիներն ունեին այլևայլ անվանումներ՝ իսրայելցիներ, դրանից հետո Գուդա անվան հետ՝ հրեաներ:

<sup>2</sup> Այդ Ենովքին է մշում, ի դեպ, Վ. Զյուգոն իր բանաստեղծություններից մեկում՝ «Խիղճը», որտեղ, սակայն, քաղաքի կառուցման շարժառիթը բոլորովին այլ է:

3. Ենովք՝ Մաթուսաղայի հայրը՝ Ենովք նահապետը, որը Ադամի յոթերորդ սերունդն էր, ծնվել է Ադամից 622 տարի հետո, եղել է նրա ժամանակակիցը 308 տարի, ապրել է 365 տարի և այնքան է հաճելի եղել Աստծուն իր գործերով, որ կենդանի երկինք է բարձրացել Եղիայի նման: Սուրբ Գրքում սրա մասին ասվում է. «Եւ Ենովքն Աստուծոյ հետ վարուեցաւ, եւ չէր գտնվում, որովհետեւ Աստուած առաւ նորան » / Ծն. Ե 24 /:

**ԵՓՐԵՄ** /Ефрем, Ефραίμ /160/- Անվան նշանակությունն է «աճեցուած, փարթամ կամ պտղաբեր » /ԲՅԱ, 93/, պտուղ /ԱԱ, 8/:

Ըստ Աստվածաշնչի /Ծն. ԽԱ 52, ԽԶ 20, Թվ. Ա 10..., Հեսու..., Ա և Բ Թագ..., Սաղմ. է 9/ Հովսեփի երկրորդ որդին էր և Մանասեի կրտսեր եղբայրը: Սա Իսրայելի տասներկու ցեղերից մեկի նախահայրն էր, որի անունից էլ Եփրեմի երկիր և Եփրեմի լեռներ /Ծն. ԽԱ 52, ԽԸ 8-20, Թվ. Բ 18-21/: Չնայած Եփրեմը ավագ որդին չէր, բայց պապը՝ Հակոբը, նրան տվեց իր օրհնությունը: Եփրեմի ցեղը միշտ էլ եղել է նշանավոր: Սրանց էր պատկանում Ավետյաց երկրի մեծ մասը, ուստի Եփրեմի երկիր էր կոչվում Իսրայելի թագավորությունը: Սամարիա (Իսրայելի տասը ցեղերի) մայրաքաղաքը Եփրեմի երկրի մեջ էր, ուստի և Եփրեմ անունը հաճախ գործածվում է Իսրայելի թագավորության փոխարեն:

**ԹՈՐԳՈՍ** /Φοργαμα, Θοργαμα/-ը արական եբրայական անուն է, որ նշանակում է «ոսկրե կամ կորովի, կամ խորտակումն ոսկերաց, կամ երկչոտ յոյժ, կամ անձկագոյն բարձրություն» /ԲՅԱ, 105/:

Ըստ Աստվածաշնչի՝ Հաբեթի որդի Գամբրի որդու անունը /Ծն. Ժ 3/, որի ազգը կոչվեց տուն Թորգոմայ՝ «Արդ՝ զօմանէ ասեն բազումք, թէ սա է հայր ազգին հայոց և կապաղովկացւոց և վասն այսորիկ երբեմն հայք կոչին որդիք Թորգոմայ և տուն Թորգոմայ» /ԲՅԱ/: Եգեկիելի մարգարեությունից մեջ հիշատակվում է վաճառաչահ «Թոգարմա տունը» /Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ՝ տուն Թորգոմայ/, որը Տյուրոս քաղաքը լցնում էր ձիերով և ջորիներով /Եգեկ. Ի է 14/: Աստվածաշնչի հին մեկնիչները, «տուն Թորգոմա » կամ «Թորգոմական աշխարհ » ասելով, հասկացել են Հայաստանը: Մովսես Խորենացու մոտ պահպանված ազգացանկում Թորգոմը համարվում է հայոց անվանադիր նախնի Հայկի հայրը:

**ԻՍԱՀԱԿ/ՍԱՀԱԿ** /Исаак, Исαακ/-ը ըստ Աստվածաշնչի՝ Իսահակ կամ Սահակ /Ծն. Ժ է 21՝ «Զուխտ իմ հաստացեցից ընդ Սահակայ», ԻԱ 3՝ «Զանուն որդւոյ իւրոյ...Իսահակ»: Արական եբրայական այս անունը, ըստ տարբեր աղբյուրների, նշանակում է ծիծաղ /ԲՅԱ, 107/, ըստ Հր. Աճառյանի՝ ծագում է ծիծաղել, կատակել բայի արմատից և նշանակում է ծաղր կամ ուրախություն: Անվան մեկնության հիմնավորումը տալիս է հենց Աստ-

վածաշունչը. «Եւ ասէ Սառա. Ծաղր արար զիս աստուած, զի որ եւ լսիցէ՝ ուրախ լինիցի ընդ իս» /Ծն. ԻԱ 6/:

ՍԱՀԱԿ /Σαακ/ անունը՝ հունական տառադարձությամբ, Աստվածաշնչում գործածվել է 19 անգամ, որի նախնական տարբերակը եղել է Իսահակ, ապա անշեշտ ի ձայնավորի կրճատմամբ մնացել է Սահակ:

Անվան այս ձևը մեզ՝ հայերիս համար ավելի սովորական և ժողովրդական ձև է, քան Իսահակը: Աստվածաշնչում, սակայն, անունների գործածություն հաճախականությունը գերազանցում է Իսահակ ձևը՝ 109 անգամ, իսկ Սահակ ձևը՝ ընդամենը 19 անգամ /Գ Թագ. ԺԳ 23, Ա Մնաց. ԺԶ 16, Սաղ. ՃԴ 9, Եսթ. ԺԴ 5, Հուդ. Ը 22..../:

Ըստ Աստվածաշնչի՝ Աբրահամի որդու անունը, որ ծնվեց Սառայից և ծնվեց Աստծու ավետումով: Հոր հավատի և գործի շարունակողը եղավ: Իսահակի բնավորության հիմնական գծերն են՝ պահպանողականություն ամեն լավագույնի, խաղաղասիրություն ամեն մարդու և հավատարմություն ամուսնության մեջ: Բազմակնությունը ողողված դարում սա միակ միակին անձն է՝ երջանիկ և բախտավոր կնոջ՝ Ռեբեկայի հետ: Ապրել է 180 տարի: Ունեցել է երկու որդի՝ Եսավին և Հակոբին:

ՀԱԲԵԹ, ԱԲԵԹ /Иафет, Іафет/-ը եբրայական անուն է՝ հունական տառադարձություն, որ նշանակում է «ընդարձակելու կամ զեղեցիկ, կամ համոզող» /ԲՅԱ, 153/: Իմաստը՝ ընդարձակություն, ըստ Աստվածաշնչի, բխում է ընդարձակել բայի արմատից՝ «Ընդարձակեցէ Աստուած Յաբեթի<sup>1</sup> և բնակեցէ ի տան Սեմայ» /Ծն. Թ 27/: Բացի ընդարձակություն իմաստից, մեկնաբանվում է նաև՝ զեղեցկություն/ըստ Գր. Տաթևացու<sup>2</sup>, ըստ ՅԵ-ի՝ да распространится /256/, նույն աղբյուրը, ի դեպ, հավելում է, որ Հաբեթ անունը պահպանված է հայկական տեղանուններում՝ Նպատ կամ Նիֆատ լեռ:

Ըստ Աստվածաշնչի /Ծն. Ե 32, Զ 10-11, Է 13, Ժ 1, 2, 21.../ Յաբեթ՝ Նոյի ավագ որդին, որին հայերը և հույները համարում են իրենց նախահայրը<sup>3</sup>:

Հայկական ավանդությունը Հաբեթի ավագ որդի Գամերի կրտսեր որդուն՝ Թորգոմին, համարում է հայոց անվանադիր նախնի Հայկի հայրը:

<sup>1</sup> Անվան Յաբեթ գրությունը հավանաբար տպագրական վրիպման հետևանք է, պետք է լիներ /Աբեթ:

<sup>2</sup> Գր. Աճառյան, ՀԱԲ, հ. 9, էջ 479:

<sup>3</sup> Ըստ ՅԵ-ի՝ ունեւրեն Սուրբ Գրքում Սեմն է Նոյի ավագ որդին /էջ 256/:

Այդ պատճառով հայ բանաստեղծները հայ մեկնիչների նման Հաբեթի ա-  
նունով հայերին անվանում են Հաբեթյան կամ Հաբեթական:

ՀԱԿՈՐ /ՅԱԿՈՐ, ՅԱԿՈՎ/ /Иаков, Іаков/- Ըստ Աստվածաշնչի՝ Յա-  
կոր, Յակորոս: Արական եբրայական այս անունը նշանակում է խաբող կամ  
գարշապար, կամ անրբանք /ԲՅԱ, 154/, նաև՝ փոխանակող՝ ըստ Ռ. Բեք-  
հաուսի /ԱԱ, 7/: Այս իմաստները բխում են հենց Աստվածաշնչից. «Եւ ա-  
պա ել եղբայր անրա և ձեռն անրա ունէր զգարշապարէ Եսաւայ. և կոչեաց  
զանուն անրա Յակոր» /Ծն. ԻԵ 25/: «Յիրաւի կոչեցեալ անուն անրա Յա-  
կոր, զի այս երկիցս խաբեաց զիս» /Ծն. ԻԷ 36/: Ըստ Հր.Աճառյանի՝ այս ի-  
մաստները միմյանց չեն հակասում, քանի որ եբրայերեն խաբել բայը նշա-  
նակում է «մեկի հետևից գնալ, կրունկը բռնել» /ՀԱԲ, Հ Գ, 482/, ըստ  
ББС-ի запинатель /СТР. 227/:

Ըստ Աստվածաշնչի հայտնի է՝

Հին Կտակարանի կարկառուն դեմքերից մեկը՝ Հակոբը՝ Իսահակի որ-  
դին՝ Եսափի երկվորյակը, որն իր ծննդյան ժամանակ բռնել էր եղբոր գար-  
շապարից, որն էլ կանխագուշակում էր ուրիշի տեղը հափշտակող լինելու  
հանգամանքը: Օգտվելով եղբոր բացակայությունից և հոր տկարություն-  
նից՝ խլում է ավագությունը և փախչում Միջագետք: Աստծու հրեշտակ-  
ները հովանավորում են նրան և խոստանում օգնություն: Մի անգամ Հա-  
կոբը երագում տեսնում է երկրից մինչև երկինք հասնող մի սանդուղք, ո-  
րով բարձրանում և իջնում էին Աստծու հրեշտակները: Եվ Աստված, դիմե-  
լով նրան, ասում է, որ ինքը Աբրահամի և Իսահակի Աստվածն է, և որ ին-  
քը օրհնում է նրան և տալիս այն երկիրը, որը դառնում է Աստծու ընտրած  
երկիրն ու ժողովուրդը, որից էլ պիտի ծնվեր Քրիստոսը: Հակոբին տրվում  
է նոր պատվական անուն՝ Իսրայել /Исраηλ/, և սա էլ դառնում է Իսրայելի  
12 ցեղերի նախահայրը: Ծննդոց-ի գրեթե կեսը ներկայացնում է Հակոբի և  
իր զավակների արկածալից կյանքը և կրոնական փորձառությունները: Սա  
ամուսնանում է իր մորեղբոր՝ Լաբանի երկու աղջիկների հետ և նրանցից  
ու նրանց աղախիններից ունենում է 12 որդի, որոնք էլ հետագայում դար-  
ձան Իսրայելի ժողովրդի տասներկու ցեղերի նահապետները, և մեկ  
դուստր՝ Դինային: Հակոբը եղել է շատ ճարպիկ, խորագետ, աշխատասեր  
անձ, որ միշտ հետապնդել է իր շահը: Նա Աստծու հրեշտակի հետ մարտնչ-  
չում է այնքան, մինչև վերջինս չի օրհնում իրեն, և իր նոր անունն էլ՝ Իս-  
րայել, հենց նշանակում է Աստծու հետ մարտնչող. «Որովհետև մարտնչե-  
ցար Աստուծոյ և մարդոց հետ և զօրավոր դուրս եկար» /Ծն. ԼԲ 24-30/:

Հակոբը իր կյանքում նաև շատ է տառապում. տեսնում է մոր՝ Ռեբեկայի, սիրելի կնոջ՝ Ռաքելի և հոր մահը<sup>1</sup>:

ՀՈՐ, ՀՈՎԲ, ՅՈՐ, ՅՈՎԲ /ИОВ, Иов/-ը եբրայական անունն է հունական տառադարձությունը, որ նշանակում է «ցաւօղ, ցաւագին կամ ատեցեալ կամ փորձեալ» /ԲՅԱ, 169/: Հր. Աճառյանը բերում է մյուսների կարծիքը՝ «ցաւագին կամ փորձեալ», ըստ ԲՄԳ-ի՝ «ցաւած», Հ. Տաշյանի՝ «հայր» /ՀԱՐ, Հ. Գ, 529/, ըստ Ռ. Բեքհաուսի «Ուղեցույցի»՝ «հալածված» /ԱԱ, 6/, ըստ ՅԵ-ի՝ угнетенный, или враждебно преследуемый /301/:

Ըստ Աստվածաշնչի /Հոբ Ա 1, 5, 8, 13, 14..., Բ 3, 7, Գ 1, ԺԵ 17, ԼԲ 2, 3..., Եգեկ. ԺԴ 14, 20, Ա Կորնթ. Գ 19/ Հին Կտակարանի համանուն գրքի հեղինակը և գլխավոր անձը, եղել է Հուս երկրի անվանի նահապետ, խիստ բարեպաշտ անձ, որին քրիստոնեական եկեղեցին պատվել է Երանելի/Благодетельный/ մականվամբ: Միշտ արդար և ողորմած Հոբը ուներ 7 որդի և 3 դուստր, որոնց հետ ապրում էր համերաշխ ու երջանիկ: Սատանան, խիստ նախանձելով Հոբին, նրան ենթարկում է դաժան փորձություններ. կորցնում է ողջ ունեցվածքը, բոլոր սիրելիներին, առողջությունը: Սակայն այդ ամենից հետո Հոբը դարձյալ փառաբանում է Աստծուն: Եվ Աստված, տեսնելով նրա անսահման խոնարհությունը, անձամբ հայտնվում է նրան և վերադարձնում այն ամենը, ինչ կորցրել էր Հոբը: Հոբը ապրել է բավական երկար՝ 140 տարի, և մինչև այդ փորձանքներն արդեն իսկ ծեր էր:

Հոբի գրքի վերաբերյալ կան տարբեր կարծիքներ, բայց գերիշխողն այն է, որ գիրքը գրված է մաքուր եբրայերենով: Թեև գիրքը ինչ-որ չափով փրկասփայլական է, բայց և այնպես Հոբը պատմական անձ է եղել, քանզի գրքում նշված անձինք կան նաև գուտ պատմական գրքերում. «Այր ոմն էր յԱւսիդ աշխարհի, որում անուան էր Յոբ. եւ էր այրն այն ճշմարիտ, անարատ, արդար, աստուածապաշտ, մեկնեալ յամենայն իրաց չարութենէ մեղաց» /Հոբ Ա 1-2/: Արաբ մատենագիրները ևս նշում են Հոբին. մահանդակական շատ ընտանիքներում Հոբը գործածական անունն է: Հինգ այլևայլ տեղերում ցույց է տրվում Հոբի գերեզմանը:

Հոբի գիրքը գրված է արևելյան բանաստեղծության վսեմ ոճով: Գրքի գլխավոր թեման այն է, թե ինչպես է Աստված հանդուրժում ու համբերում, որ արդար մարդիկ վիշտ կրեն, իսկ անարժանները վայելեն կյանքի բարիքները: Այս խնդիրը լուծում է հեղինակը շատ ինքնատիպ. Աստված

<sup>1</sup> Հակոբ անվամբ Աստվածաշնչում հայտնի են նաև Ձեբեդեոսի որդի Չակոբը, Հիսուսի կրտսեր եղբայրը համարվող Չակոբը և այլն:

մարդկանց գործերը վարում է նախախնամովթյամբ, և ինքը պետք է ընտրի պահն ու ժամանակը՝ պատժելու և շնորհելու, նա պետք է փորձի իր ժողովրդի հավատարմովթյունը, ինչպես իրեն է հարմար: Աստու պատիժները դիմաց Հորը միմիայն խոստովանում և ապաշխարում է: Խոստովանելով և խոր հավատով առ Աստված՝ նա նաև միամտորեն գանգատվում է նրանից: Ի վերջո նա վայելում է Աստու ողորմածովթյան շնորհը<sup>1</sup>:

ՀՈՒԳԱ, ՅՈՒԳԱ /Иуда, Юда/ անունը Սուրբ Գրքում գործածվել է 850 անգամ: Անվան նշանակովթյունն է՝ «գովություն կամ խոստովանություն» /ԲՅԱ, 168/, ըստ Ռ. Բեքհաուսի՝ «գովք» /ԱԱ, 9/: Ըստ БС-ի՝ хвала, или прославленный /190/: Անվան իմաստը գալիս է աստվածաշնչյան բնագրից. «Եւ յղացաւ դարձեալ, ծնաւ որդի, եւ ասէ. Զայս միւս անգամ գոհացայց զՏեսնէ, եւ կոչեաց զանունն նորա Յուդա» /Ա-1/Ծն. ԻԹ, 35/: Ա-2/ արևմտահայերեն Աստվածաշունչը ևս կրկնում է Ա-1-ին. «Այս անգամ պիտի գոհանամ Տէրոջմէն, անոր համար անոր անունը /գոհություն/ Յուդա դրաւ ու դարարեցաւ ծնանելէն»: Ըստ հայերեն թարգմանովթյունների՝ Աստվածաշնչի Յուդա անունը մեկնաբանվում է գոհություն, որը, ինչպես տեսնում ենք, տարբերվում է գովություն իմաստից և տրամաբանորեն առավել ճիշտն է:

Աստվածաշնչում հանդես են գալիս Հուդա անունը կրող 13 անձեր, որնցից Հին Կտակարանի կարկառուն դեմքը Հակոբի և Լիայի 4-րդ որդին՝ Հուդան է, որը ստացավ առաջնեկի իրավունքը, որից զրկվել էր Ռուբենը: Երբ Հովսեփի եղբայրները որոշեցին սպանել նրան, Հուդան համոզեց նրանց՝ Հովսեփին վաճառել ստրկովթյան /Ծն. ԻԹ 35, Լէ 26-27, ԽԴ 16-34/: Սա պատվավոր անձ է Հովսեփի պատմովթյան մեջ, որից սերեցին Դավիթը և նրա թագավորական զարմը: Գերովթյունից դարձին իր ցեղին միացրեց եբրայական ողջ ազգը, որը ճանաչվեց իբրև հրեա ազգ, կամ Հուդայան, իբրև սերունդ Հուդայի, որի ազգից սերեց Հիսուս Քրիստոսը:

Հայ հին և միջնադարյան բանաստեղծովթյան մեջ հաճախական են Հուդայի տուն և Հուդայի ցեղ արտահայտովթյունները:

Նոր Կտակարանը հիշատակում է Հուդա անունը կրող երեք անձ.

1. Հուդա՝ Թադևոսի /Ղեբեոս/ անունը /Ղուկ. Զ 16, Գործք Ա 13/:
2. Հուդա՝ Հիսուսի եղբայրը /Մատթ. ԺԳ 55, Մարկ. Զ 3/:
3. Հուդա Իսկարիովթացի:

<sup>1</sup> Յորի գրքի ազդեցությունը որոշակի է Գյոթեի «Ֆաուստի», Բայրոնի «Մանֆրեդի» նախերգանքներում, ինչպես նաև Նարեկացու «Մատյան Ողբերգության» պոեմի վրա:



ՄԱԹՈՒՍԱՂԱ /Μαφυσала/Μαθουσαλα/-ն բառացի նշանակում է «զմահ հիր եթող կամ մահուան հիրոյ զէն և կամ եբրայերէն և ասորերէն՝ զմահ հիր կողոպտող կամ մահուան կողոպտուտ» /ԲՅԱ, 136/: Ըստ Հր. Աճառյանի՝ չի կարելի անունը ներկայացնել Մաթուս աղա ձևով, որը թյուր կարծիքի կհանգեցնի, իբր թուրքերեն ծագում ունեցող, և անվան նշանակութիւնը տալիս է ըստ Gesenius -ի՝ «առաքումն» /ՀԱԲ, ՀԳ, 162/: Ըստ Ռ. Բեքհասուի՝ «տեգակիր» /ԱԱ, 6/: ՅԵ-ն Μαφυσал անվան բացատրութիւնը տալիս է « по Гезению муж Божий или муж оружия » /413/:

Ըստ Աստվածաշնչի /Ծն. Դ 18, Ե 21, 22, 25..., Ա Մնաց. Ա 2, Ղուկ. Գ 37/ սա Մաթուսաղա նահապետն է՝ Ենովքի որդին և Ղամեքի հայրը, որը Աստվածաշնչի ամենաերկարակյաց անձն է համարվում. ապրել է 969 տարի: Աստվածաշնչի միևնույն գրքում/Ա-1/ առկա է այս անվան հետ կապված հակասութիւն, ինչպես՝ Ծն. Դ 18-ում՝ «...էլ ծնաւ Մայիէլ Մաթուսաղա, էլ Մաթուսաղա ծնաւ Ղամէք», մինչդեռ Ծն. Ե 21, 23- ում՝ «Եւ եկեաց Ենովք ամս հարեւր վաթսուն և հինգ, էլ ծնաւ զՄաթուսաղա «Եւ եկեաց Մաթուսաղա ամս հարեւր ութսուն և եւթն, էլ ծնաւ Ղամէք»: Ինչպես նկատում ենք, նույն Մաթուսաղան մի դեպքում Մայիելի որդին է, մեկ այլ դեպքում՝ Ենովքի:

ՆՈՅ /Ной, Νωε/-ը արական եբրայական անուն է հունական տառադարձութեամբ, որ նշանակում է հանգիստ, դադար /ԲՅԱ, 178/, նաև մխիթարություն, հետագայում Nuhija անվան հետ համեմատելով՝ իբրև անոր, անորոհիչ /ՀԱԲ, ՀԴ, 82/: ՅԵ-ն ևս հաստատում է покой, успокоение /468/ նշանակութիւնը:

Ըստ Աստվածաշնչի /Ծն. Ե 29, 30, 32, Զ 8,10..., Ղուկ. Ժէ 26/ Ադամի տասներորդ սերունդը և սկիզբը նոր մարդկութեան: Հոչակավոր նահապետ, որը երկրորդ նախահայրն է մարդկային ազգի: Աստվածաշնչի առաջին գրքի՝ Ծննդոց-ի հինգ գլուխներ նվիրված են Նոյին և ջրհեղեղի պատմութեանը: Նոյը որդին է Ղամեքի և թողը Մաթուսաղայի: Ունեցել է երեք որդի՝ Սեմ, Քամ և Հաբեթ: Նոյի ժամանակներում չարիքն ու անարդարութիւնը անսահման չափեր էին ընդունել. «Եւ իբրեւ ետեւ Տէր Աստուած, եթէ բազմացան չարիք մարդկան ի վերայ երկրի, էլ ամենայն ոք խորհէր ի սրտի իրում խնամով ի չարիս զամենայն առաւր, Եւ ստրջացաւ Աստուած զի արար զմարդն ի վերայ երկրի, էլ մտախոհ եղեւ ի սրտի իրում. Եւ ասէ Տէր Աստուած. Ջնջեցից զամենայն մարմին զոր արարի յերեսաց երկրէ, ի մարդոց մինչեւ յանասուն, էլ ի սողնոց մինչեւ ի թռչունս երկնից, զի բար-

կացայ զի արարի զնոսա: Բայց Նոյ եգիտ շնորհս առաջի Տեառն Աստուծոյ » /Ծն. Զ 5-8/: Իսկ չարիքը, որը ողողել էր երկիրը, Սուրբ Գրքում պարզաբանվում է երկու բառով՝ ապականություն և անիրավություն. «Ապականուեցաւ երկիր Աստուծոյ առջեւ եւ լեցուցաւ անիրավութեամբ» /Ծն. Զ 11/: Իսկ Նոյը ստացավ արդար և կատարյալ մակդիրները: Նոյի անունն անբաժանելիորեն կապվում է Արարատ լեռան հետ: Նա և իր ընտանիքը /թվով ութ անձ/ փրկվում են՝ նախօրոք պատրաստված տապանով հանգրվանելով «Ի լերինս Արարատայ» /Ծն. Ը 4/: Հովսեպոս Փլավիոսի և Եվսեբիոսի մոտ պահպանված, ինչպես նաև հայկական ավանդություններում Նախօրոք տեղանունը մեկնաբանվում է իբրև Նոյի առաջին իջևանատեղի: Հնագույն այլ ավանդությունների վրա հիմնվելով՝ Վարդան աշխարհագիրը Նոյի գերեզմանատեղին մատնանշում է Վասպուրականի Նախճավանում, իսկ նրա տիկնոջ գերեզմանատեղին՝ Մարանդում: Ավանդաբար Նոյի անվանն են կապվում Ակոռի գյուղի, Անոյոտն գավառի, Երևան քաղաքի, Նպատ լեռան և այլ անվանումներ:

ՍԵՄ /Сим, Σημ/-ը հունական տառադարձություններ այս անվան նշանակությունն է «անուն կամ համբավ, կամ եղեալ, կամ անդ» /ԲՅԱ, 205/, ՎՍՀԱՄ-ը՝ համբավ, ըստ ЭБ-ի՝ имя, название /591/:

Ըստ Աստվածաշնչի /Ծն. Զ 9, Ե 32, Է 13, Ժ 21-31, ԺԱ 10, Ղուկ. Գ 38/ Նոյի ավագ որդին՝ եբրայեցիներին նախահայրը, որը ծնվեց իր հոր՝ Նոյի 500 տարեկանում և որի սերնդից սերվեց Մեսիան: Ունեցավ հինգ որդի՝ Եղամ, Ասուր, Արփաքսադ, Ղուդ և Արամ, որոնք դարձան սեմական լեզուներ կրողները՝ եբրայեցիներ, ասորիներ, արաբներ, եթովպացիներ և այլն: Արփաքսադը ծնեց Սաղային, Սաղան՝ Երեբին:

Տաք, ջերմություն կամ սև /ԲՅԱ, 226/ իմաստներով է բացատրվում ՔԱՄ /Χαμ / Χαμ /15/ անունը:

Ըստ Աստվածաշնչի /Ծն. Ե 32, Զ 10, Է 13, Ժ 1, 6, 20.../ Քամը Նոյի որդին է, որի անվամբ էլ քանանացիները հաճախ կոչվել են Քամի որդիներ: Քամը Քուշի, Մեսրանի, Փուդի, Քանանի հայրն է, այսինքն՝ քանանացիների, հարավային արաբների, եթովպացիների, եգիպտացիների և աֆրիկացիների նախահայրը /Ծն. Ժ 6-20/: Քամի արարքի՝ հորը մերկ վիճակում տեսնելու պատճառով Նոյը անիծում է նրան ու նրա որդուն՝ Քանանին. «Անիծեալ լինի Քանանը, ծառաների ծառայ լինի նա իր եղբայրներիս» /Ծն. Թ 25-26/: